Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի դեկտեմբերին

(վերլուծություն)

2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 20232 գործարք, որոնց քանակը 2017 թվականի նոյեմբեր ամսվա համեմատ աճել է 2.2 %-ով, իսկ 2016 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 14.6 %-ով:

2017 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5925 օտարման գործարքի 77.3 %-ը կազմել է առուվաճառքը, 22.3 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 38.5 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի դեկտեմբերին, 2017 թվականի նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքը աճել է 11.9 %-ով, իսկ 2016 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 35.2 %-ով:

2017 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.7 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի դեկտեմբերին, 2017 թվականի նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 19.2 %-ով, իսկ 2016 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 50.4 %-ով:

2017 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	**Միջին գները (դրամ)**		
	դեկտեմբեր 2016 թ.	**դեկտեմբեր 2017 թ.**	**նոյեմբեր 2017 թ.**
Կենտրոն	428250	465500	456500
Արաբկիր	357450	350100	344500
Քանաքեռ-Զեյթուն	283350	267400	267400
Նոր Նորք	254500	234500	231500
Ավան	262100	249700	248600
Էրեբունի	252600	238800	236050
Շենգավիթ	258250	245100	243200
Դավթաշեն	277300	260800	255600
Աջափնյակ	251500	232000	229500
Մալաթիա-Սեբաստիա	244400	235500	233700
Նուբարաշեն	157700	159600	158500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 1.2%-ով:

2017 թվականի դեկտեմբերին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 476 բնակարան, որոնց քանակը 2017 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 19.6 %-ով, իսկ 2016 թվականի դեկտեմբերի համեմատ ՝ 35.6 %-ով:

2017 թվականի դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		դեկտեմբեր 2016 թ.	դեկտեմբեր 2017 թ.	նոյեմբեր 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116200	108000	106000
	Ապարան	58900	60000	59000
	Թալին	66900	64000	62000
Արարատ	Արտաշատ	99250	93100	93100
	Մասիս	115800	99850	99850
	Վեդի	101750	90000	90000
	Արարատ	77850	79000	79000
Արմավիր	Վաղարշապատ	154200	118000	120000
	Արմավիր	121250	90000	92000
	Մեծամոր	87600	69100	69100
Գեղարքունիք	Սևան	99400	82200	82200
	Գավառ	60800	52000	51000
	Մարտունի	107700	110000	107500
	Վարդենիս	45400	46100	46100
	Ճամբարակ	28800	28800	28800
Լոռի	Վանաձոր	88600	76500	76500
	Ստեփանավան	74900	68000	66000
	Սպիտակ	99950	90000	88000
	Ալավերդի	55950	47000	47000
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	30000	30000
Կոտայք	Աբովյան	155150	156600	154200
	Նոր Հաճն	128550	120500	119500
	Բյուրեղավան	108250	95500	93500
	Եղվարդ	110050	109300	106000
	Հրազդան	63900	56000	56000
	Ծաղկաձոր	292400	288000	288000
	Չարենցավան	85500	70800	73000
Շիրակ	Գյումրի	109450	89000	85000
	Արթիկ	67400	67000	66000
	Մարալիկ	41150	42300	42300
Սյունիք	Գորիս	124200	125000	125000
	Կապան	95800	97200	97200
	Սիսիան	92400	91000	91000
	Մեղրի	83650	92000	92000
	Քաջարան	95000	99500	99500
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95100	90300	92000
	Եղեգնաձոր	126550	118100	121500
	Ջերմուկ	113300	98000	98000
Տավուշ	Դիլիջան	115700	110000	110000
	Իջևան	118600	113000	113000
	Բերդ	60600	62000	62000
	Նոյեմբերյան	50600	52000	52000
	Այրում	31900	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ^2 մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել է 0.4%-ով:

2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 537 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 150 գործարք, մարզերում՝ 387 գործարք: 2017 թվականի դեկտեմբերին, 2017 թվականի նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակն աճել է 7.6 %-ով, ընդ որում, Երևանում՝ նվազել 1.3 %-ով, իսկ մարզերում՝ աճել 11.5 %-ով: 2017 թվականի դեկտեմբերին 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 29.1 %-ով, ընդ որում, Երևանում՝ 27.1 %-ով, իսկ մարզերում՝ 29.9%-ով:

2017 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	**Միջին գները (դրամ)**		
	դեկտեմբեր 2016 թ.	**դեկտեմբեր 2017 թ.**	**նոյեմբեր 2017 թ.**
Կենտրոն	476350	478500	476000
Արաբկիր	383200	384200	381000
Քանաքեռ-Զեյթուն	295300	283100	283100
Նորք-Մարաշ	319550	304250	302000
Ավան	270750	263000	263000
Էրեբունի	239900	234130	234130
Շենգավիթ	255150	230000	230000
Դավթաշեն	276200	270000	270000
Աջափնյակ	250300	242500	240000
Մալաթիա-Սեբաստիա	238250	235100	234100
Նուբարաշեն	150800	150000	150000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 0.4%-ով:

2017 թվականի դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	**Քաղաքներ**	**Միջին գները (դրամ)**		
		դեկտեմբեր 2016 թ.	**դեկտեմբեր 2017 թ.**	**նոյեմբեր 2017 թ.**

Արագածոտն	**Աշտարակ**	136250	131200	130000
	Ապարան	60050	52000	51000
	Թալին	69250	66000	66000
Արարատ	**Արտաշատ**	100100	97000	97000
	Մասիս	115100	110100	110100
	Վեդի	102300	90600	90600
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	**Վաղարշապատ**	153150	148100	148100
	Արմավիր	107000	99000	99000
Գեղարքունիք	**Սևան**	94950	92000	92000
	Գավառ	57100	53800	53800
	Մարտունի	96200	95000	95000
	Վարդենիս	41150	41150	41150
	Ճամբարակ	31100	32000	32000
Լոռի	**Վանաձոր**	100900	98200	98200
	Ստեփանավան	91200	82000	82000
	Սպիտակ	114050	108000	108000
	Ալավերդի	50300	51000	51000
	Տաշիր	51900	45000	45000
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	**Աբովյան**	157350	157300	156400
	Նոր Հաճն	129800	128000	128000
	Բյուրեղավան	120500	110000	110000
	Եղվարդ	116100	109000	109000
	Հրազդան	82600	71000	71000
	Ծաղկաձոր	305000	300000	300000
	Չարենցավան	83000	80000	80000
Շիրակ	**Գյումրի**	119350	116000	116000
	Արթիկ	63450	60400	60400
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	**Գորիս**	130050	128000	128000
	Կապան	100850	101500	101500
	Սիսիան	96500	96700	96700
	Մեղրի	84750	89500	89500
	Դաստակերտ	11610	11810	11810
Վայոց ձոր	**Վայք**	90150	88100	88100
	Եղեգնաձոր	116750	114000	114000
	Ջերմուկ	131300	130000	129000
Տավուշ	**Դիլիջան**	115850	115000	115000
	Իջևան	123250	120200	120200
	Բերդ	60100	57000	57000
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ^2 մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի նոյեմբերի համեմատ, աճել է 0.1 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում օտարվել է 2153 միավոր (3265.00 հա) հող, որից Երևանում՝ 131 միավոր (12.28 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 1286 միավոր (3065.08 հա), որից Երևանում՝ 9 միավոր (1.96 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 574 միավոր (52.67 հա), որից Երևանում՝ 50 միավոր (3.63 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 244 միավոր (46.05 հա), որից Երևանում՝ 69 միավոր (6.42 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 32 միավոր (91.35 հա), որից Երևանում՝ 3 միավոր (0.27 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 9 միավոր (1.80 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 8 միավոր (8.05 հա) ընդհանուր մակերեսով:

2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1780 միավորի (3016.21 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 108 միավոր (9.42 հա), նվիրատվության գործարք՝ 356 միավորի (247.55 հա), որից Երևանում՝ 15 միավոր (2.65 հա) և փոխանակության գործարք՝ 17 միավորի (1.24 հա), որից Երևանում՝ 8 միավոր (0.21 հա):

Հանրապետությունում 2017 թվականի դեկտեմբերին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 37.9 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 31.5 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 53.1 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.4 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1734.51 հա, որից 1725.42 հա գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 29.3 %-ը կամ 522 միավորը (565.19 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 27 միավոր (1.11 հա), իսկ 69.7 %-ը կամ 1240 միավորը (2349.70 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 77 միավոր (8.26 հա): 2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել է է վարձակալության իրավունքի վաճառքի 18 գործարք (101.32 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացված է 2017 թվականի դեկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	0	0.00	11	0.26	16	0.84	7	1.67	3	0.27	33	2.33	34	3.99
Արագածոտն	62	169.86	0	0.00	3	0.55	11	1.32	79	127.20	0	0.00	22	2.63	6	0.40
Արարատ	61	128.01	7	0.55	48	3.91	29	1.28	162	110.61	3	8.97	55	4.94	6	0.25
Արմավիր	10	18.44	1	0.07	0	0.00	11	0.85	104	1706.98	0	0.00	77	8.14	4	0.03
Գեղարքունիք	8	6.04	1	1.05	11	0.85	29	4.46	78	50.27	0	0.00	22	3.43	1	0.27
Լոռի	18	61.44	2	0.65	6	0.13	6	0.02	63	33.23	0	0.00	12	2.04	4	0.03
Կոտայք	54	116.30	0	0.00	35	1.25	14	0.27	133	80.98	5	2.72	72	5.78	12	2.40
Շիրակ	8	18.75	0	0.00	7	0.52	3	0.01	60	58.21	0	0.00	15	1.96	1	0.10
Սյունիք	3	1.32	0	0.00	7	0.01	0	0.00	31	33.51	1	0.22	21	1.62	5	0.86
Վայոց ձոր	7	11.52	0	0.00	3	0.12	3	0.16	39	52.00	0	0.00	7	0.79	4	0.18
Տավուշ	7	4.44	7	1.71	3	0.13	3	0.03	50	39.77	0	0.00	7	0.65	0	0.00
Ընդամենը	**238**	**536.12**	**18**	**4.03**	**134**	**7.73**	**125**	**9.24**	**806**	**2294.43**	**12**	**12.18**	**343**	**34.31**	**77**	**8.51**

Ստորև ներկայացված է 2017 թվականի դեկտեմբերին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	18	0.25	0	0.00	8	0.11	10	0.14	9	0.86	0	0.00	0	0.00	3	0.16	6	0.70
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	69	171.61	55	169.74	0	0.00	3	0.55	11	1.32
Արարատ	6	0.023	0	0.00	1	0.003	5	0.02	139	133.72	61	128.01	7	0.55	47	3.90	24	1.26
Արմավիր	2	0.02	0	0.00	0	0.00	2	0.02	20	19.34	10	18.44	1	0.07	0	0.00	9	0.83
Գեղարքունիք	10	0.40	0	0.00	1	0.01	9	0.39	38	11.97	7	6.02	1	1.05	10	0.84	20	4.06
Լոռի	8	0.52	1	0.50	4	0.01	3	0.01	19	11.72	13	11.43	1	0.15	2	0.12	3	0.02
Կոտայք	9	0.02	0	0.00	5	0.01	4	0.01	91	115.07	51	113.57	0	0.00	30	1.24	10	0.26
Շիրակ	4	0.014	0	0.00	1	0.004	3	0.01	14	19.26	8	18.75	0	0.00	6	0.51	0	0.00
Սյունիք	7	0.01	0	0.00	7	0.01	0	0.00	3	1.32	3	1.32	0	0.00	0	0.00	0	0.00
Վայոց ձոր	2	0.014	0	0.00	1	0.01	1	0.004	11	11.78	7	11.52	0	0.00	2	0.11	2	0.15
Տավուշ	2	0.02	0	0.00	0	0.00	2	0.02	18	6.29	7	4.44	7	1.71	3	0.13	1	0.01
Ընդամենը	68	1.29	1	0.5	28	0.17	39	0.62	431	502.94	222	483.24	17	3.53	106	7.56	86	8.61

2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 16 գործարք (52.87 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի դեկտեմբերին, 2016 թվականի դեկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 3.6 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 50.0 %-ով, իսկ մարզերում աճել է 4.1 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 9.3 անգամ, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 3.1 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 2.2 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.8 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի դեկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	47	165.74	40.1	2352.8	368.7	54	86.13	365.0	12000.0	3512.0
Ապարան						1	0.43	86.5	2727.3	680.0
Թալին	8	3.99	78.1	400.2	171.6	8	6.98	93.6	5494.5	697.2
Ծաղկահովիտ						13	33.55	79.5	1000.0	442.2
Արարատի մարզ										
Արտաշատ	37	19.60	72.3	4519.1	890.6	55	24.09	335.1	10833.3	2730.0
Մասիս	5	5.18	284.5	998.6	622.6	25	6.81	200.0	11904.8	3350.0
Վեդի	19	103.23	17.8	1146.2	336.9	79	79.04	207.0	10795.1	1915.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	7	17.78	64.8	2284.8	404.2	60	25.21	294.3	9090.0	1536.0
Բաղրամյան						16	1666.65	90.6	2561.1	780.0
Վաղարշապատ	3	0.65	80.5	2381.0	1258.0	27	14.06	444.4	11764.7	2138.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.49	185.1	185.1	185.1	13	2.33	199.8	1875.0	560.0
Ճամբարակ	1	2.62	468.1	468.1	468.1	2	0.09	60.5	953.3	352.0
Մարտունի	4	2.81	53.2	220.3	127.8	7	1.13	51.1	2850.0	720.0
Սևան						40	13.66	52.2	2134.8	385.0
Վարդենիս	1	0.10	121.0	121.0	121.0	16	33.07	41.2	2575.1	360.0
Լոռու մարզ										
Ալավերդի						10	5.56	170.4	6424.2	545.0
Գուգարք	13	11.43	172.8	1321.3	569.2	3	0.58	234.6	6065.9	830.0
Սպիտակ						2	0.70	250.0	5555.5	645.0
Ստեփանավան						7	2.98	90.6	1686.6	417.0
Տաշիր						38	21.17	45.3	1384.4	190.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	10	66.64	226.7	721.5	407.8	41	31.08	279.3	11942.7	3877.2
Եղվարդ	31	42.68	74.3	1875.4	592.0	64	30.36	174.4	11971.8	2580.0
Հրազդան	10	4.25	80.9	1014.9	437.4	21	15.49	130.5	10256.4	1150.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						18	17.30	252.0	1693.1	742.0
Ամասիա						2	5.86	40.9	261.0	150.0
Անի						22	20.56	110.6	546.9	481.5
Աշոցք	2	0.04	7000.0	7000.0	7000.0			58.5	215.8	144.0

Արթիկ	6	18.71	319.2	660.0	405.8	17	14.49	79.4	1428.6	530.0
Սյունիքի մարզ										
Գորիս						8	18.75	92.6	1023.2	648.5
Կապան						1	0.34	120.0	841.6	467.5
Մեղրի	3	1.32	1200.0	3740.0	2893.3	5	1.84	193.0	3000.0	870.0
Սիսիան						14	11.57	46.3	1977.4	490.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	11.52	70.2	707.0	313.4	18	20.90	125.0	10000.0	1840.0
Վայք						21	31.10	58.8	1430.7	660.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.27	213.3	3783.8	755.0
Իջևան	6	3.97	43.7	188.6	101.4	5	1.72	267.5	9454.5	1650.0
Նոյեմբերյան	1	0.47	550.0	550.1	550.1	43	37.38	46.7	7368.4	1094.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի դեկտեմբերին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ²)	պայմանագրային գները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ²)	շուկայական գները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	1220.0	814.1	814.1	814.1	17	18082.6	130.7	22200.0	2615.0
Ապարան						2	3892.0	124.1	609.6	390.0
Թալին	2	4327.0	151.2	151.2	151.2	2	3340.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ	39	37989.4	535.2	1617.5	770.6	26	24488.2	173.9	7140.3	902.5
Մասիս	4	124.5	3416.2	6065.0	4451.5	18	13775.1	187.5	25000.0	1204.0
Վեդի	4	926.6	293.0	1668.7	1023.3	11	11180.0	126.1	5000.0	664.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						32	40313.0	131.6	9090.9	1217.0
Բաղրամյան						2	1562.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						41	38494.7	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	591.6	125.1	125.1	125.1	6	13032.0	186.6	1084.3	683.0
Ճամբարակ						1	1145.0	71.3	2286.2	147.0
Մարտունի	7	7303.0	122.2	220.0	178.0	9	11342.4	119.3	5000.0	277.0
Սևան	2	510.8	244.4	1409.6	827.0	2	1854.0	240.0	3110.4	355.0
Վարդենիս						4	6931.6	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի						6	11604.2	114.3	1388.9	217.0
Գուգարք	1	21.0	2201.4	2201.4	2201.4	3	4150.0	77.9	14083.3	1258.3
Սպիտակ						1	1401.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան	1	1180.0	580.8	580.8	580.8	1	540.0	88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	18	8113.8	444.1	4971.9	2297.1	40	35237.6	264.5	35353.5	1962.0

Եղվարդ	6	2894.3	623.7	3234.0	2002.9	27	19324.0	173.6	27000.0	2852.5
Հրազդան	6	1405.2	1428.3	4976.4	2401.8	5	3236.0	117.7	34848.5	1317.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	443.4	3145.0	4200.0	3672.5	7	7816.0	113.6	18750.0	333.0
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						1	1360.0	67.9	180.6	216.2
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	4	4702.0	133.2	2750.3	793.3	7	10452.0	111.8	5000.0	217.0
Սյունիքի մարզ										
Գորիս						7	3544.7	112.2	1700.0	364.0
Կապան						4	2414.0	67.9	2638.9	390.0
Մեղրի						4	3801.6	68.5	632.9	270.0
Սիսիան						6	6420.0	123.5	875.0	263.8
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						7	7925.4	96.7	7659.6	505.0
Վայք	2	1100.1	468.6	474.9	471.7			120.7	1448.3	253.5
Տավուշի մարզ										
Բերդ						1	903.0	75.8	810.0	133.0
Իջևան	2	569.4	1266.2	1428.3	1397.3	6	5553.8	74.1	14423.1	471.2
Նոյեմբերյան	1	683.3	891.1	891.1	891.1			125.0	1948.1	259.0

2017 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 820 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.1 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 94.4 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2017 թվականի դեկտեմբերին, 2017 թվականի նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 38.8 %-ով, իսկ 2016 թվականի դեկտեմբերի համեմատ՝ աճել 24.6 %-ով:

2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 41 բնակարանի, 18 անհատական բնակելի տան, 387 հասարակական և 65 արտադրական նշանակության օբյեկտի, 303 հողի և 6 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում վարձակալված 2427.83 հա հողից 0.22 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 2427.61 հա հողերից 2352.23 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 53.16 հա արդյունաբերական, 2.40 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Արարատի մարզում՝ 1272.21 հա, որից 1267.33 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3200 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 15.8 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի նոյեմբերի համեմատ, աճել է 33.8%-ով, իսկ 2016 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 8.5 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (52.2 %), անհատական բնակելի տների (22.6 %), հասարակական նշանակության օբյեկտների (9.8 %) և հողերի (10.8 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1830 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017

թվականի նոյեմբերի համեմատ աճել է 37.9 %-ով, իսկ 2016 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 10.2 %-ով:

2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել է 1424.93 հա հող, որից 12.94 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 1395.05 հա կամ 97.9 %-ը գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 1003.01 հա, որից 999.38 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 592 գործարք: 2017 թվականի դեկտեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի նոյեմբերի համեմատ, աճել է 55.0 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 3.3 անգամ: Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 482 գործարք, որը 2017 թվականի նոյեմբերի համեմատ, աճել է 64.5 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 4.1 անգամ: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի նոյեմբերի համեմատ, աճել 23.6 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 86.4 %-ով:

2017 թվականի դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է 2423 առաջնային գրանցում, որոնց քանակը, 2017 թվականի նոյեմբերի համեմատ, նվազել է 22.0 %-ով, իսկ 2016 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 9.2 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 12.0 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (18.4 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե